

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ԱՍՏՂԱԾԱՌ

Արյունը մղվում է առաջ,
բայց բնագոյը գնում է ետ ու հասնում է
նախամոր ծնկներին:

Հայկ Նահապետի նպատակի նետը
դրվել է աղեղի վրա
փափկասուն կրծքերի:

Հայորդու կերած կաթը
սնում է ազատության ոգին,
նրա բազուկը
ստրկության շղթաներ չի հանդուրժում:

Դարերի խորխորատների միջից,
արմատները խրած լավաների մեջ
երկինք է ելնում
Թորգոմա ծառը:

Գալիքի աստղերը
գալիս են մտնելու
տոհմածառի սաղարթների մեջ:

ԱԶԳՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ

Կան մարդիկ, որոնք ազգություն չունեն.
ռուսների մեջ ռուս են, հույների մեջ՝ հույն,
և հայերի մեջ՝ հայ:
Կան մարդիկ, որոնք ապրում են
սրտի և հոգու միջև, կյանքի և մահվան արանքում,
ճշմարտության ու կեղծիքի եզրագծերի միջև:

Նրանք սողոսկում են ուրիշ ազգերի
լեզվի ու մտքի գաղտնագրերի խորքը,
ձևափոխվում, հարմարվում են,
թուրքի պես չեն սիրում հային,
լեհի նման ատում են գերմանացուն
և չեխի պես չեն հանդուրժում սլովակին:
Կան մարդիկ, որոնք խոսում են
բոլոր ազգերի լեզուներով,
օտար խմբերի առաջնորդ են դառնում,
օտար խմբավորումների խորհրդատու:

Կան մարդիկ, որոնք խելքից դուրս դրամ ունեն
և դրամից ու խելքից առավել՝ գաղտնիքներ:

Նրանք ազգերին փաթաթված գայլուկներ են,
դարձանի տակ ապրող ջրեր,
թող Տերը մեզ ազատի այդ մարդկանցից,
որոնք ապրում են ազգերի մեջ,
բայց ազգություն չունեն: